

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ





Ծ Ի Ա Ծ Ա Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԹԵՄԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՅ.

Ի 1865 ԱՄԻ.



ասեաց Աղաւնին ահա ինը տարի իւր դժուարին շրջանները կատարեց ըստ կարի, ժամանակիս մըրկածին եւ խռովայոյզ միջնոլորտին տարերացը դէմ ոգորելով, ինչպէս որ յայտնի է իւր բաժանորդներուն: Ուրախ եմք որ կրնամք ըսել թէ վերջապէս գտաւ նա «Դադար ոտից իւրոց» — ի հաճութեան ընթերցասիրաց ազգիս, որք ուր ուրեմն աւելի ուղիղ հասկըցան նորա միտքը եւ լեզուն եւ ջանքը:

Առաջիկայ 1865 տարւոյն մէջ կլուէ Մասեաց Աղաւնին, եւ նորա տեղը ԾԻԱԾԱՆը կսկսի խօսիլ Հայաստանի որդւոցը հետ՝ նոյն Աղաւնւոյն հոգւովն ու լեզուովը: Եւ թէպէտ օրինաւոր պատճառներէ ստիպեալ՝ կամփոփէ Ծիածանը այս տարի իւր նիւթական տարածութիւնը, բայց հաստատ դրած է միաքը որ աւելի իմաստալից եւ աւելի ցանկալի ընելով ընթերցողաց իւր թերթերը, պատճառ չտայ նոցա ափսոսալու մէջի յօդուածներուն երկար չլինելուն վրայ:

Ծիածանին տարեկան գինը դարձեալ կմնայ ամէն տեղերու համար 6 ռուպլի արծաթ:

Խմբագրատունը կխնդրէ որ բաժանորդ գրուիլ ուղղոյները իրենց անուանը հետ յուղարկեն 6 ռուպլին այս հասցէով.

Въ Редакцію Армянскаго журнала «Радуга»

ВЪ ТЕОДОСІЮ.

